

ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանի 2010թ. հունվար ամսվա հաշվետվություն

Հանդիպումներ միջազգային կազմակերպությունների հետ

- 20.01 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը Ազգային ժողովում հանդիպում ունեցավ Նիդերլանդների Արտաքին գործերի նախարարության դիվանագետ Բերբեր Վան Դեր Վուդի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ՀՀ ԱԺ նախագահի ԵՄԽՎ-ի հայկական պատվիրակության կազմի փոփոխման վերաբերյալ արված կարգադրության օրինականության, ԵՄԽՎ-ում «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության ներկայացվածության հետ կապված մի շարք այլ հարցեր:
- 20.01 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը և «Ժառանգություն» կուսակցության վարչության նախագահ Արմեն Մարտիրոսյանը կուսակցության գրասենյակում հանդիպեցին ԱՄՆ պետական դեպարտամենտում Հայաստանի հարցերով պատասխանատու Ջոզեֆ Ֆարելիի և նրան ուղեկցող ՀՀ ԱՄՆ դեսպանատան դիվանագետ Դանիել Յոթինգի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց հայ-թուրքական հարաբերությունների վերջին զարգացումների հետեւանքով ստեղծված իրավիճակը, ներկայացվեց կուսակցության անփոփոխ տեսակետը Արցախի ինքնիշխանությունը հարգելու եւ ճանաչելու վերաբերյալ, ինչպես նաեւ անդրադարձ կատարվեց ԵՄԽՎ-ում «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության ներկայացվածության հարցին:

ԶԼՄ-ներ

Մամուլ ասուլիսներ

- 11.01 «Փաստարկ» ակումբում «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը հանդիպեց լրագրողների հետ՝ խոսելով տարածաշրջանային զարգացումներում ՆԱՏՕ-ի դերակատարման վերաբերյալ:

Հարցազր. մամուլ

- 11.01 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը հարցազրույց տվեց «7 օր» էլեկտրոնային պարբերականին՝ խոսելով հունվարի 10-ին թիվ 10 ընտրատարածքում կայացած ընտրությունների մասին:
- 20.01 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը «Armenia today»-ով մեկնաբանեց ՀՀ Սահմանադրական դատարանի հայ-թուրքական արձանագրությունների սահմանադրականության վերաբերյալ, ընդունած որոշմանը Թուրքիայի արտգործնախարարության արած հայտարարությունը:

Ռադիո

- 26.01 «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը հարցազրույց տվեց «Ազատություն» ռադիոկայանին՝ մեկնաբանելով ԵՄԽՎ-ի հայկական պատվիրակության կազմից «Ժառանգություն» խմբակցության ներկայացուցիչ Ջարուհի Փոստանջյանի մշտական անդամի կարգավիճակից ժամանակավորի փոխելու ՀՀ ԱԺ նախագահի որոշման վերաբերյալ:

Հեռուստատեսային հարցազրույց

- 19.01 «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության «Երկիրն այսօր» լրատվական հաղորդաշարով մեկնաբանեց թուրքական լրատվամիջոցներով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման վերաբերյալ արված արձագանքները:

Մասնակցություն հասարակակն միջոցառումներին

- 19.01 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը, պատգամավորներ Լարսա Ալավերդյանը և Անահիտ Բախշյանը հարգանքի տուրք մատուցեցին 1990 թ. հունվարի 13-19-ը Բաքվում հայերի դեմ իրականացված զանգվածային ջարդերի զոհերի հիշատակին՝ ծաղիկներ դնելով զոհերի հիշատակը հավերժագնող հուշակոթողի մոտ: